

Արդյոք կարո՞ղ էր քո սուրբ,
Բեկված հոգին երագել,
Որ դառնալու ես մի օր
Քո հայրենիքը վսեմ,
Որ պիտի շուրջդ բուրի
Սերն ու գգվանքը մեր այս,
Եվ Չարենցը համբուրի
Քո շրթունքները մեռած...

Օ, վարդապետ անվեղար,
Որ օրերում վրդովիչ
Ջայնի հովիվ լոկ եղար
Ջեռքիդ սրինգ մի թովիչ,

Դու աղոթքի փոխարեն
Ջայն խնկեցիր միայն վեհ,
Դեպի երկինք, որ բյուրեղ
Ժողովրդիդ սիրտն էր մեծ...

Կխաղաղվի վերջապես
Խոնջած աճյունը քո հար—
Դարձած մոխիր կենսաբեր,
Դարձած սկյուն, դարձած քար...
Հայրենացա՛ծ, սրբացա՛ծ՝
Կապրի հոգիդ հմայող՝
Դարձած ելնող երգի ձայն.
Եվ հայրենի դարձած հող...

*
*
*

Է Պ Ի Տ Ա Ֆ Ի Ա

Աստ՝ Կոմիտասն է հանգչում՝ իբրև հող ու աճյուն առհասկեմ:
Միրտ մոխրացած, դարձած հող՝ երբեմնի անոթ ձայնածին:
Ա՛յր մահացու՝ աշխարհում նա եղել է դպիր, վարդապետ:
Այր մշտաձև՝ ձայնապետ—ձայների արքա—ձայնագիր:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

ՀԱՏՎԱԾ՝ «ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ» ՊՈԵՄԻՑ

Դու ամենայն Հայոց Երգի Վեհափառն ես,
Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
Գիրն ու տառն ես Հայոց երգի:

Հայոց երգի
Անձիր հերկի
Ե՛վ ակունն ու խորունկ առն ես,
Ե՛վ մատընտիր սերմը նրա,
Ե՛վ խոստումը գալիք բերքի...

Եվ ծիրանի մեր այն ծառն ես,
Որ ինչքան էլ ճղակոտոր՝
Շրտկվել է և բար տվել...

Եվ հայրենի այն ծիծառը,
Որ հավիտյան բույն է դրել

Մեր հոգու մեջ,

Մեր կիսավեր ու դեռ կանգուն տաճար-
ների

Ու մեր երկնի գմբեթի տակ...

Դու՝ մեր տավիղ,

Եվ քո լարը

Մինչև անգամ և հատվելիս
Հայերեն է նորից ճնգում:

Դու՝ մեր սրտի ձայնալարը,
Մինչև անգամ վհատվելիս
Հայերեն ես դարձյալ տնքում...

Դու ես քարը

Եվ սրբատաշ մեր պատշարը.

Հացը օրվա

Եվ նեղ ժամի մեր պաշարը.

Մեր փակ հոգին, բաց աշխարհը,

Սրբագործված մեր նշխարը.

Եվ մեր ճարը՝

Օտարամուտ ախտի դիմաց.

Խնկածավալ մեր տաճարը՝

Օտարահոտ աղտի դիմաց.

Վերադարձի մեր պատճառը՝

Մեր հարկադիր գաղթի դիմաց.

Համահավաք մեր հանճարը՝

Ազգաբնիկություն բախտի դիմաց...

Դու մեր հաստատ Մասիս սարը՝

Վատահեղի թիկունքն ես մեր,

Մեր երգերի ծովասարը

Ու բյուրական ակունքն ես մեր,

Մեր արնոտված հավքի լեզուն,

Մեր կարոտած ֆիդան յարը,

Մեր լեփլեցուն հոգիների ձայնատարը,

Մեր երգերի խա՛ղը-նոտա՛ն-ձայնատարը.

Ջայնասրբիլո՞ղը կենդանի

Ու ձայների թանգարանը,—

Մեր հայկական երգարանը...

Եվ մեզանից արդ ընդունիր
Երախտիքի այս խաչքուռը,
Այս խաչքուռը՝ քո իսկ հերկի:

Ընդունիր դու, դու՝ մեր երգի
Մշտահնչուն նվագարան:
Ընդունիր դու՝ մեր ցաքուցի
Մասունքների հավաքարար.
Դու՝ խազերի մեր քերական,
Դու՝ հոգևոր մեր շարական.

Դու՝ սրբազան մի ավագան,
Որ մեր հոգին ավատահանեց,
Դու՝ քիբրիական մի գավագան,
Որ ուր դիպավ՝ աղբյուր հանեց.
Դու մեր կարոտ ու մեր մորմոք,
Մեր տաղի քուրմ,
Մեր խաղի մոգ,
Մեր մշտահունչ ու մշտարթուն,
Անլուելի զանգակատուն...

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ս

Նրա համար ես
Աղոթում եմ,
Մինչև լույսերը
Աղոտում են:

Եվ աստղերը, որոնք
Մշտարթուն են,
Իմ աղոթքի վրա
Մեղմ թարթում են:

Օգնիր նրան,—ասում եմ,—
Նա ցրտումն է,
Նա արև է երազում,
Նա տրտում է...

Հեռու լուսե իմ երկրից,
Մույթ վանդակում,
Մեռնում է նա աներգ
Ու բանդագուշ...

ԵՐԳ ԿՈՄԻՏԱՍԻՆ

Սիրտս քեզնով լեցուն է,
Սիրտս այնպես,
Քո երգերը ցնծում են
Նուրբ ու անտես:

Եվ արտերի՛ն ոսկեվոր,
Արահետներին,
Երգում է երգչդ օրոր
Անցած օրերից:

Օրոր հանդին ու կալին,
Հասկերին օրոր,
Օրոր հոգնած մաճկալին
Օրո՛ր, օրո՛ր:

Օրոր և քեզ հեռավո՛ր,
Հեռավո՛ր իմ,
Օրորներիդ օրոր,
Երգիդ մտերիմ...

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

Գ Ե Պ Ի Կ Ա Ռ Ա Փ Ն Ա Ր Ա Ն

Կոմիտասի հիշատակին

Այնտեղ էին նրանք... Վարուժանը խոհուն,
Սիամանդոն՝ հայացքն ուղղած դեպի եթեր,
Եվ ո՞վ գիտե արդյոք, արդյոք ի՞նչ էր խորհում
Կոմիտասը՝ հոգում պահած բազում երգեր...

